ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 24.10.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2019/169

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի

Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ «Պետական գույքի գույքագրման և գնահատման գործակալություն» ՊՈԱԿ

Մասնակից՝ «Ինֆինիտի գրուպ» ՍՊԸ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝

«ՊԳ19-ԳՀԱՊՁԲ-ՏՆՏ01» ծածկագրով գնանշման հարցում, տնտեսական ապրանքների ձեռքբերում

Պայմանագրի ծածկագիրը՝ «ՊԳ19-ԳՀԱՊՁԲ-ՏՆՏ01/2»

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 04.10.2019թ.-ի թիվ 26/26-1/16313-2019 գրությամբ «Ինֆինիտի գրուպ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու

իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

ՊԱՐԶԵՑ

1. <u>Գործի նախապատմությունը</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Պետական գույքի գույքագրման և գնահատման գործակալություն» ՊՈԱԿ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 27.09.2019թ. թիվ Ե-314 գրության հիման վրա, 04.10.2019թ.-ին «Ինֆինիտի գրուպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձի 04.10.2019թ.-ի որոշմամբ գործը ընդունվել է վարույթ և 10.10.2019թ.-ին նշանակվել է նիստ:

Գործի քննությունն ավարտվել է 10.10.2019թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 24.10.2019թ.-ին:

2. <u>«Պետական գույքի գույքագրման և գնահատման գործակալություն» ՊՈԱԿ-ի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը</u>.

«Պետական գույքի գույքագրման և գնահատման գործակալություն» ՊՈԱԿ-ն 27.09.2019թ. թիվ Ե-314 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևայլը.

«Տեղեկացնում ենք Ձեզ, որ «Պետական գույքի գույքագրման և գնահատման գործակալություն» պետական ոչ առևտրային կազմակերպության և «Ինֆինիտի Գրուպ» ՍՊԸ-ի միջև 14 մայիսի 2019թ. կնքված «Պետական գույքի գույքագրման և գնահատման գործակալություն ՊՈԱԿ-ի կարիքների համար տնտեսական ապրանքների մատակարարման» «ՊԳ19-ԳՀԱՊՁԲ-ՏՆՏ01/2» գնման պայմանագրի շրջանակներում մասնակիցը խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունները, խախտել է ապրանքի մատակարարման ժամկետները, արդյունքում հանձնվել է պայմանագրով

որոշվածից պակաս քանակի ապրանք, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացրել են «Ինֆինիտի գրուպ» ՍՊԸ-ի վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը:

3. <u>«Ինֆինիտի գրուպ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 07.10.2019թ.-ին գրությամբ դիմել է «Ինֆինիտի գրուպ» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 04.10.2019թ.-ի թիվ 26/26-1/16313-2019 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացրել գրավոր դիրքորոշում, առարկություններ կամ կարծիք՝ չներկայանալով նաև հրավիրված նիստին:

4. <u>ՍՑ-LO-2019/169 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

«Պետական գույքի գույքագրման և գնահատման գործակալություն» ՊՈԱԿ-ի և «Ինֆինիտի գրուպ» ՍՊԸ-ի միջև 14.05.2019թ.-ին կնքվել է թիվ «ՊԳ19-ԳՀԱՊՁԲ-ՏՆՏ01/2» ծածկագրով պետական գնման պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր):

Պայմանագրի հավելված 1-ով տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանվել է ապրանքների մատակարարման ժամկետները, ծավալները և հասցեն:

www.gnumner.am համացանցային կայքում 23.09.2019թ.-ին հրապարակված պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցման համաձայն՝ «Պետական գույքի գույքագրման և գնահատման գործակալություն» ՊՈԱԿ-ի և «Ինֆինիւրի Գրուպ» ՍՊԸ-ի միջև 14 մայիսի 2019թ.-ին կնքված «Պետական գույքի գույքագրման և գնահատման

գործակալություն ՊՈԱԿ-ի կարիքների համար տնտեսական ապրանքների մատակարարման թիվ «ՊԳ19-ԳՀԱՊՁԲ-ՏՆՏ01/2» գնման պայմանագրի համաձայն՝ «Ինֆինիտի Գրուպ» ՍՊԸ-ն պարտավոր էր Պայմանագրի թիվ 1 հավելված «տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույց»-ով նախատեսված ժամկետում և Պայմանագրի 1.1 կետով սահմանված կարգով 10.08.2019թ.-31.08.2019թ. ընկած ժամանակահատվածում կատարեր ստանձնած պարտավորությունները: Սակայն մինչև նշված ժամկետը չի մատակարարել Պայմանագրի «հավելված 1»-ով սահմանված ապրանքները, այն է՝ ք. Երևան, Զաքիյան 10 հասցեով չի մատակարարել՝ 26 լիտր լվացող նյութեր /ունիվերսալ /Լինա/, 9 կգ մաքրող նյութեր /խցանումը մաքրելու համար/ Լինա, 38 լիտր ձեռքի հեղուկ օճառ յանտար, 5 լիտր հատակ մաքրելու նյութեր Լինա, 100 հատ հատակ մաքրելու լաթ Օֆիս Քլին: Կառավարական 2-րդ շենք հասցեով չի մատակարարել՝ 100 լիտր լվացող նյութեր /ունիվերսալ/Լինա/, 98 լիտր ձեռքի հեղուկ օճառ յանտար, 175 հատ հատակ մաքրելու լաթ Օֆիս Քլին, 15 հատ ավել սովորական: Կառավարական 3-րդ շենք հասցեով չի մատակարարել՝ 60 լիտր լվացող նյութեր /ուեիվերսալ/Լինա/, 97 լիտր ձեռքի հեղուկ օճառ յանտար, 190 հատ հատակ մաքրելու լաթ Օֆիս Քլին, 25 հատ ավել սովորական:

Պետական գույքի գույքագրման և գնահատման գործակալություն» ՊՈԱԿ-ը 2019 թվականի սեպտեմբերի 12-ին թիվ Ե-300 գրությամբ նախազգուշացրել է Մասնակցին, որպեսզի Պայմանագրով նախատեսված պարտավորությունները կատարվեն, այլապես միակողմանի կլուծվի վերջինիս հետ կնքված պայմանագիրը:

Պայմանագրով սահմանված ժամկետում Պայմանագրի Հավելված 1-ով սահմանված ապրանքները Մասնակցի կողմից չեն մատակարարվել և խախտվել են Պայմանագրի էական պայմանները: Հետևաբար, «Պետական գույքի գույքագրման և գնահատման գործակալություն» ՊՈԱԿ-ը, հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 ենթակետի «ա» և «բ» պարբերությունների պահանջները՝ 2019թ. սեպտեմբերի 23-ին միակողմանի լուծել է 2019 թվականի մայիսի 14-ին կնքած թիվ «ՊԳ19-ԳՀԱՊՁԲ-ՏՆՏ01/2» ծածկագրով պայմանագիրը:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված

փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 04.10.2019թ.-ի թիվ 26/26-1/16313-2019 գրությամբ «Ինֆինիտի գրուպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ նաև Օրենսգիրք) 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 352-րդ հոդվածի համաձայն՝

1. Եթե պարտավորությունը նախատեսում է կամ հնարավորություն է ընձեռում որոշել դրա օրը կամ ժամանակահատվածը, ապա պարտավորությունը պետք է կատարվի այդ օրը կամ այդ ժամանակահատվածի ցանկացած պահին:

2. Այն դեպքերում, երբ պարտավորությունը կատարման ժամկետ չի նախատեսում և ժամկետի որոշման պայմաններ չի պարունակում, այն պետք է կատարվի պարտավորության ծագումից հետո՝ ողջամիտ ժամկետում:

3. Ողջամիտ ժամկետում չկատարված պարտավորությունը, ինչպես նաև այն պարտավորությունը, որի կատարման ժամկետը որոշվում է պահանջի պահով, պարտապանը պարտավոր է կատարել այդ մասին պարտատիրոջ պահանջի ներկայացման օրվանից հետո՝ յոթնօրյա ժամկետում, եթե պարտավորության կատարման այլ ժամկետ չի բխում օրենքից, այլ իրավական ակտերից, պարտավորության պայմաններից, գործարար շրջանառության սովորույթներից կամ պարտավորության էությունից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար պատասխանատու է մեղքի առկայության դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

Օրենսգրքի 420-րդ հոդվածի համաձայն՝

1. Եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, ապա դատարանը համապատասխանաբար նվազեցնում է պարտապանի պատասխանատվության չափը: Դատարանն իրավունք ունի նաև նվազեցնել պարտապանի պատասխանատվության չափը, եթե պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար:

2. Սույն հոդվածի 1-ին կետի կանոնները համապատասխանաբար կիրառվում են նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն' պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն՝ պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը: Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի,

Վերոնշյալ հոդվածների համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ օրենսդիրն որպես պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման սահմանել է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Պարտապանը պարտավորությունը անպատշաճ կատարելու

համար չի կարող կրել պատասխանատվություն՝ մեղքի բացակայության պայմաններում: Ուստի, այն դեպքերում, երբ պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը խախտելու մեջ բացակայում է պարտապանի մեղավորությունը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել մասնակցի (պարտապանի)՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ավելին, եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, պարտապանի պատասխանատվության չափը պետք է նվազեցվի, ինչպես նաև այն դեպքերում, երբ պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար, ընդ որում, նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

«Պետական գույքի գույքագրման և գնահատման գործակալություն» ՊՈԱԿ-ի և «Ինֆինիտի գրուպ» ՍՊԸ-ի միջև 14.05.2019թ.-ին կնքվել է թիվ «ՊԳ19-ԳՀԱՊՁԲ-ՏՆՏ01/2» ծածկագրով պետական գնման Պայմանագրի հավելված 1-ով տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանվել է ապրանքների մատակարարման ժամկետները, ծավալները և հասցեն:

www.gnumner.am համացանցային կայքում 23.09.2019թ.-ին հրապարակված պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցման համաձայն՝ «Պետական գույքի գույքագրման և գնահատման գործակալություն» ՊՈԱԿ-ի և «Ինֆինիւրի Գրուպ» ՍՊԸ-ի միջև 14 մայիսի 2019թ. կնքված «Պետական գույքի գույքագրման և գնահատման գործակալություն ՊՈԱԿ-ի կարիքների համար տնտեսական ապրանքների մատակարարման թիվ «ՊԳ19-ԳՀԱՊՁԲ-ՏՆՏ01/2» գնման պայմանագրի համաձայն՝ «Ինֆինիտի Գրուպ» ՍՊԸ-ն պարտավոր էր Պայմանագրի թիվ 1 հավելված «տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույց»-ով նախատեսված ժամկետում և Պայմանագրի 1.1 կետով սահմանված կարգով 10.08.2019թ.-31.08.2019թ. ընկած ժամանակահատվածում

կատարեր ստանձնած պարտավորությունները: Սակայն մինչև նշված ժամկետը չի մատակարարել Պայմանագրի «հավելված 1»-ով սահմանված ապրանքները, այն է՝ ք. Երևան, Զաքիյան 10 հասցեով չի մատակարարել՝ 26 լիտր լվացող նյութեր /ունիվերսալ /Լինա/, 9 կգ մաքրող նյութեր /խցանումը մաքրելու համար/ Լինա, 38 լիտր ձեռքի հեղուկ օճառ յանտար, 5 լիտր հատակ մաքրելու նյութեր Լինա, 100 հատ հատակ մաքրելու լաթ Օֆիս Քլին: Կառավարական 2-րդ շենք հասցեով չի մատակարարել՝ 100 լիտր լվացող նյութեր /ունիվերսալ/Լինա/, 98 լիտր ձեռքի հեղուկ օճառ յանտար, 175 հատ հատակ մաքրելու լաթ Օֆիս Քլին, 15 հատ ավել սովորական: Կառավարական 3-րդ շենք հասցեով չի մատակարարել՝ 60 լիտր լվացող նյութեր /ուեիվերսալ/Լինա/, 97 լիտր ձեռքի հեղուկ օճառ յանտար, 190 հատ հատակ մաքրելու լաթ Օֆիս Քլին, 25 հատ ավել սովորական:

Պետական գույքի գույքագրման և գնահատման գործակալություն» ՊՈԱԿ-ը 2019թվականի սեպտեմբերի 12-ին թիվ Ե-300 գրությամբ նախազգուշացրել է Մասնակցին, որպեսզի Պայմանագրով նախատեսված պարտավորությունները կատարվեն, այլապես միակողմանի կլուծվի վերջինիս հետ կնքված պայմանագիրը:

«Պետական գույքի գույքագրման և գնահատման գործակալություն» ՊՈԱԿ-ը, հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 ենթակետի «ա» և «բ» պարբերությունների պահանջները՝ 2019թ. սեպտեմբերի 23-ին միակողմանի լուծել է 2019 թվականի մայիսի 14-ին կնքած թիվ «ՊԳ19-ԳՀԱՊՁԲ-ՏՆՏ01/2» ծածկագրով պայմանագիրը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ թիվ «ՊԳ19-ԳՀԱՊՁԲ-ՏՆՏ01/2» ծածկագրով գնման Պայմանագրով սահմանված ժամկետում Պայմանագրի Հավելված 1-ով սահմանված ապրանքները Մասնակցի կողմից չեն մատակարարվել, որի արդյունքում խախտվել են Պայմանագրի էական պայմանները:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ տվյալ դեպքում, «Ինֆինիտի գրուպ» ՍՊԸ-ի կողմից դրսևորած անգործության արդյունքում, Պատվիրատուն հիմք ընդունելով Պայմանագրի դրույթները, միակողմանիորեն 23.09.2019թ.-ին լուծել է այն՝ www.gnumner.am համացանցային կայքում 23.09.2019թ.-ին հրապարակելով պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցումը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ ... մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է

պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4 ի N 526 Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 33-րդ կետի 16-րդ ենթակետի համաձայն՝ պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնած Պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Ինֆինիտի գրուպ» ՍՊԸ-ն խախտել է պայմանագրով նախատեսված և դրա շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը: Ուստի, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթները, Մասնակցին պետք է ընդրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը,

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 04.10.2019թ.-ի թիվ 26/26-1/16313-2019 գրությամբ «Ինֆինիտի գրուպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2019/169 ծածկագրով ընթացակարգը բավարարել:

2. «Ինֆինիտի գրուպ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**